



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 27 ՆՈՎԵՄԲԵՐ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 100

ԵՐԳ ԳՈՂԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Տիրոջ աղաղակեցէք, **ամբողջ** աշխարհի:
Ուրախութեամբ ծառայեցէք **Տիրոջ**,
ցնծութեան երգերով եկէք **անոր** ներկայութեան:
Գիտցէք թէ **Տերը** ինքն է **Աստուածը**:
Ան մեզ ստեղծեց, եւ մենք **անորն** ենք.
Իր ժողովուրդն ենք, այն **հօտը՝ որ** ինք կ'արածէ:
Գոհաբանութեամբ մտէք **անոր** տաճարը,
օրհներգութեամբ մտէք **անոր** շրջափակէն ներս.
Հնորհակալութիւն յայտնեցէք **իրեն**,
օրհնաբանեցէք **իր** **անունը**:
Բարի է **Տերը**, **անոր** սերը **յաւերժական** է,
եւ բոլոր սերունդներուն կը ցուցաբերէ **իր** **հաւատարմութիւնը**:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հոսկանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՆ ԵՎ ՄԱՐԿՈՍ

5:1-4

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԷՑՆԵՐՈՒՄ (5:1-4)

Պեպրոս Առաքեալ ընդհանուր պատկերը փայլ էր թե՛ ինչպիսի նեղություններու եւ չարչարանքներու պէտք է պատրաստ ըլլայ Եկեղեցին, այսինքն՝ հաւաքացեալները, որպէս մասնակից Քրիստոսի չարչարանքներուն, ու ապա Անոր փառքին, կը շարունակէ իր յորդորը, այս անգամ նկարի ունենալով Եկեղեցւոյ երէցները, այսինքն՝ անոնք որոնք պատրաստանապարտ, վերակացու կարգուած են Աստուծոյ հօրը արածելու: Ինչպիսին պէտք է ըլլայ անոնց նկարագիրը:

Նախ կ'անդրադառնայ, այն իրողութեան, թէ ինքն ալ այդպիսին է, այսինքն՝ իրեն ալ յանձնուած է Աստուծոյ հօրը, եւ այս պարագային նոյնինքն՝ Յիսուս Քրիստոս, ըսելով. «Միմոն, Յովնանի որդի, կը սիրեն՝ գիտէ: Արածէ իմ ոչխարներս» (Յովի 21:15-19): Այսպէս երէցը փարիքի իմաստով չէ, այլ պարականութեան, այն ծառայութեան որուն կանչուած են: Երկրորդ, Պեպրոս Առաքեալ երբ կը յորդորէ հաւաքացեալները ինչպիսին ըլլալու չարչարանքներու, նեղություններու եւ հալածանքներու ընթացքին, որպէս մասնակից Քրիստոսի չարչարանքներուն, անով հասնելու նաեւ այն մեծ ուրախութեան, այս յորդորները կու փայ նաեւ իր անձնական փորձառութեան լոյսին փայլ, որուն համար կ'ըսէ. «**ինչպէս դուք, նաեւ ես ձեզի պէս վկայ եմ Քրիստոսի չարչարանքներուն եւ ձեզի հետ ալ մասնակցի պիտի ըլլմ գալիք փառքին որ պիտի յայտնուի**» (1 հմբ): Այսինքն՝ ես ալ կ'անցնիմ այդ նեղություններէն, ես ալ գիտեմ ինչ կը նշանակէ այդ չարչարանքները կրել: Այնպէս չէ, որ Առաքեալին յորդորները միայն փեսայութիւն են, այլ կեանքով փորձուած վկայութիւններ: Միւս կողմէ, նաեւ Պեպրոս Առաքեալ ակնարկէ եղաւ եւ Քրիստոսի չարչարանքներուն, օրինակ՝ Գեթսեմանէի պարտէզին մէջ, եւ Անոր փառքին՝ Թափօր լեռան վրայ, Քրիստոսի այլակերպութեան ժամանակ:

Աղաչելով, կ'աղաչէ, որ իրենց «վստահուած Աստուծոյ հօրը արածեցէք

1. Ոչ թէ իբր պարտադրանք, այլ՝ կամաւորաբար
2. Ոչ թէ դրամի սիրոյն, այլ՝ յօժարութեամբ
3. Ոչ թէ ձեզի վստահուած մարդոց պարտադրելով ձեր անձերը, այլ՝ օրինակ ըլլալով ձեր հօրին:

Ինչո՞ւ: Որպէսզի երբ Հովուապետը յայտնուի՝ անթառամ փառքի պսակը ընդունիք: Նեղութեան, դժուարութեան, չարչարանքի ու հալածանքի ժամանակ աւելի յարակ կը դառնայ իւրաքանչիւր երեցի յանձն առած ծառայութիւնը: Որովհետեւ երբ կացութիւնը խաղաղ է, կարծէք աւելի դիւրին է հովուելը, բայց երբ նեղություններն ու դժուարությունները կը հասնին, այն արեւն ջուրի երես կ'ելլէ անոր նկարագիրն ու ծառայութեան դիպումը, թէ ինչպիսին է եւ ինչ բանի համար յանձն առած էր այդ ծառայութիւնը, որուն վստահուած էր արածելու Աստուծոյ հօրը: Նախ ինքնին յարակ կը դառնայ, որ անոնք նշանակուած, ընտրուած հովուներ են, իսկ հօրը Աստուծոյ կը պարկանի: Քրիստոս պիտի ըսէ. «արածէ իմ ոչխարներս»: Առաւել եւս, այս խօսքի աւարտին Պեպրոս Առաքեալ ցոյց կու փայ, թէ երբ Հովուապետը յայտնուի, այսինքն՝ Քրիստոս: Ուրեմն երէցը ինք Քրիստոսի կողմէ յանձնառարուած հովուին է, որ պէտք է իր ծառայութիւնը ընէ կամաւորաբար, որուն համար կանչուեցաւ, յօժարութեամբ, եւ ոչ թէ արծաթախրութեան համար, առաւել եւս առանց ինքզինք, իր կամքը պարտադրելու Աստուծոյ հօրին:

Հետաքրքրական է, որ այս նկարագրային գիծերը, որ Պեպրոս կը ներկայացնէ, եթէ երբեք համեմատենք Ելից գիրքի 18:19-23, ապա այնպէս պիտի փեսնենք նոյնանման գիծեր, երբ Մովսէսի աները՝ Յոթոր հետեւեալ պատուէրը կու փայ Մովսէսին.

1. Անոնց սորվեցուր կանոններն ու օրէնքները եւ գիտցուր անոնց իրենց քալելու ճամբան ու իրենց ընելու գործը:
2. Բոլոր ժողովուրդէն կարող մարդիկ, Աստուծմէ վախցող, ճշմարտասէր, ազահութիւնը արող:

Ի վերջոյ, եթէ երէցները պատրաստանապարտ են ժողովուրդին, Աստուծոյ հօրին, ապա բոլորը պատրաստանապարտ են Հովուապետին՝ Քրիստոսին: Այս բոլորը ուրիշ բան չեն եթէ ցոյց կու փան Եկեղեցւոյ ինքնութիւնը, որ կը պարտաստուի ըլլալու այն գեղեցիկ հարսը դիմաւորելու համար իր Փեսան՝ Յիսուս Քրիստոսը: Ուստի ո՞վ պէտք է ղեկավարէ Եկեղեցին, եւ ի՞նչպէս: Եկեղեցին պէտք է ղեկավարուի Աստուածակեդրոն դրութեամբ, ինչպէս որ էր անցեալին, երբ Աստուած Իրեն համար

ժողովուրդ պատրաստեց, եւ անապատային թափառումներու ընթացքին Վկայութեան Խորանին դիրքը 12 ցեղերուն կեդրոնն էր, որ կը նշանակէ, ժողովուրդին կեանքին մէջ Աստուծոյ ներկայութիւնն ալ այդպիսին պէտք էր ըլլար, Աստուածպետական դրութեամբ ղեկավարուող ժողովուրդ, ունենալով Աստուծոյ ներկայացուցիչները: Սա կը նշանակէ, որ Եկեղեցոյ մէջ ալ Աստուած Ինք է Երեցը նշանակողը, հաւատացեալները պարզապէս մաքնացոյց ընողներն են: Սուրբ Հոգին է որ շնորհներ փառով կը նշանակէ որպէս վերակացուներ Աստուծոյ հօփին: Հօփ, որ Քրիստոս Իր արեան գնով գնեց: Ահա երեցի մասին այնպիսի յորդորներ կան Նոր Կրակարանին մէջ, Գործք Առաքելոց գիրքին, ինչպէս նաեւ Պօղոս Առաքելի նամակներուն մէջ:

Իբրեւ օրինակ ըլլալու հօփին Քրիստոսի օրինակովը, երբ կ'ըսէ. **«Ես եմ իրաւ հովիւր: Իրաւ հովիւր իր կեանքը կու փայ ոչխարներուն համար. մինչ վարձկանը, որ հովիւ չէ եւ որուն չեն պարկանիր ոչխարները»** (Յովի 10:11-15): Որպէսզի ուրախութեամբ ընեն եւ ոչ թէ դժգոհութեամբ (Եբր 13:17):

